Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թ.
մարտի 22-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Նպատակ/ Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Կատարման ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 |
| **Մթնոլորտային օդի պահպանություն** | | | | | | |
| 1. | «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքի նախագծի մշակում | Ամրագրել մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները; ակնկալվում է ունենալ իրավական հենք օդի որակի գնահատման նոր չափանիշների մշակման, արտանետումների սահմանափակումը նոր տեխնոլոգիաների ներդրման իրականացման, արտանետումների հաշվառման միասնական համակարգի ստեղծման համար | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2018 թվականի 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքից բխող նոր ենթաօրենսդրական ակտերի մշակում, գործող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարում | Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով/ ենթաօրենսդրական իրավական ակտերի ամփոփ փաթեթ | ՀՀ բնապահպանության նախարարություն | | օրենքն ընդունելուց հետո 3 տարվա ընթացքում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 3. | Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման միասնական համակարգի ստեղծում | Արտանետումների հաշվառման գործընթացի կատարելագործում/ միջազգային պարտավորությունների պատշաճ մակարդակով կատարում | ՀՀ բնապահպանության նախարարություն | | օրենքն ընդունելուց հետո 3 տարվա ընթացքում | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 4. | Շարժական աղբյուրների մթնոլորտ արտանետումների կառավարման ոլորտի իրավական փաստաթղթերի համապատասխանե-ցում՝ միջազգային համաձայնագրերին դրույթներին: | Շարժական աղբյուրներից վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2021թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | **Ջրային ռեսուրսների** | **արդյունավետ** | **կառավարում** | | |
| 1. | Սևանի, Հրազդանի ջրավազանային կառավարման պլանի մշակում | Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2021թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 2. | Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություննե-րում ավտոմատ, կենտրոնացված կառավարման համակարգի ներդրում | Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործում ձկնաբույծների կողմից օգտագործվող ջրաքանակների վերաբերյալ առցանց տվյալների առկայություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 3. | Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի պաշարի և վերականգնվող ռեսուրսի հաշվարկում | Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածք-ների և բնական պաշարների նախարարություն | 2020թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| | | **Կենսաբազմազանություն** | | | | |
| 1. | «Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման | Նվազագույնի հասցնել ապօրինի անտառհատումները, կրճատել վերահսկողական աշխատանքների | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գյուղատնտեսութ-յան նախարարություն | 2019 թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համակարգի ներդրում | աշխատատարությունը:<br>Ակնկալվում է վերահսկողության համակարգի կատարելագործում, ապօրինի անտառհատումների կրճատում, անտառների ամբողջականության ապահովում, անտառածածկ տարածքների ավելացում: | | | | |
| 2. | <<Պետություն - մասնավոր հատված>> համագործակցության շրջանակներում <<Ջերմուկ>> ազգային պարկի ստեղծում | Էկոհամակարգերի ամբողջականության ապահովում:<br>Կապահովվեն էկոհամակարգերի ամբողջականությունը, կկատարելագործվեն դրանց կառավարման համակարգերը: | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գյուղատնտեսութ-յան նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնութ-յամբ) | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 3. | Բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացում՝ <<Իջևանի անտառային>> արգելավայրի և <<Լոռու լճեր>> պահպանվող լանդշաֆտի ստեղծում | Էկոհամակարգերի ամբողջականության ապահովում:<br>Կապահովվեն էկոհամակարգերի ամբողջականությունը, կկատարելագործվեն դրանց կառավարման | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գյուղատնտեսութ-յան նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնութ- | 2020թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | համակարգերը: | | յամբ) | | |
| 4. | Առկա բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակում և հաստատում | Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության բարելավում:<br>Կկարգավորվեն ԲՀՊՏ-ների կառավարման գործընթացը և հարակից համայնքների հետ հարաբերությունները, ԲՀՊՏ-ների կառավարման պլանների առկայություն: | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| **Հողային ռեսուրսների պահպանություն** | | | | | | |
| 1. | Ընդերքօգտագործման թափոնների գույքագրում (այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների) | Հաշվառել ՀՀ տարածքում առկա ընդերքօգտագործման թափոնները, գնահատել թափոններով զբաղեցրած՝ տնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերի ծավալը, գնահատել ընդերքօգտագործման թափոնների տեղադրման կամ պահման ընթացքում հողերի վրա դրևսորվող բացասական ազդեցությունը:<br><br>Ընդերքօգտագործման թափոնների զբաղեցրած հողերի հաշվառում, դրանց աղտոտվածության | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2022թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | գնահատում, աղտոտվածության նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված ծրագրերի կազմման համար ելակետային տվյալների առկայություն: | | | | |
| 2. | Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական ռեկուլտիվացիայի մեթոդների մշակում, բնութագրիչ հարթակներում կենսաբանական ռեկուլտիվացման պիլոտային ծրագրերի իրականացում | Պարզաբանել ՀՀ տարածքում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման հեռանկարները, մշակել մեթոդական հիմքեր ընդերքօգտագործողների համար, նախապես ընտրված հարթակներում իրականացնել կենսաբանական վերականգնման ցուցադրական ծրագրեր:<br><br>Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական ռեկուլտիվացիայի մեթոդական հիմքերի առկայություն: | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ (համաձայնությամբ) | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 3. | ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային և սողանքավտանգ | Գնահատել բնության հատուկ պահպանվող տարածքների հողային ծածկույթի վրա արտածին երկրաբանական երևույթների բացասական | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2022թ. 3-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տեղամասերի գույքագրում, սողանքային տեղամասերի կայունացման մեթոդների/եղանակնե-րի վերաբերյալ առաջարկությունների մշակում | ազդեցությունը, հաշվառել սողանքային մարմիններով զբաղեցրած մակերեսները:<br><br>Բնության հատուկ պահպանվող տարածքներում սողանքային մարմինների տարածման և չափերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազայի (ներառյալ՝ մանրակրկիտ քարտեզագրական նյութերի) առկայություն: | | | | |
| 4. | Արարատյան դաշտի հողերի աղակալման կանխարգելման և աղազերծման մելիորատիվ աշխատանքների իրականացում | Նվազեցնել բնական և մարդածին ազդեցության հետևանքով Արարատյան դաշտի հողերի առաջնային և երկրորդական աղակալումը:<br><br>Աղազերծված և գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերի առկայություն | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | ՀՀ բնապահպանութ-յան նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2019թ. և շարունակական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 5. | Հողերի աղտոտվածության և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի իրականացնում | Հողերի աղտոտվածության, դեգրադացման վերաբերյալ պարբերաբար արդիականացվող տեղակատվության ստացման գործընթացի կանոնակարգում: | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ | 2019թ-ից շարունակա-կան | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ տարածքին համարժեք՝ նպատակային տեղեկատվության ստացում ապահովող մոնիթորինգային ցանցի առկայություն: | | գյուղատնտեսութ-յան նախարարություն<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ առողջապահութ-յան նախարար<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ ազգային անվտանգություն ծառայություն<br><br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետակա կոմիտեի<br><br>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Հողերի մոնիթորինգի տվյալների միասնական շտեմարանի մշակում | Մշակել և գործարկել հողերի աղտոտվածության և դրանց վրա այլ բացասական ազդեցությունների վերաբերյալ տարբեր պետական կառավարման լիազոր մարմինների կողմից իրականացվող մոնիթորինգի տվյալների ներբեռնման միասնական շտեմարան:<br><br>Հողերի աղտոտվածության վերաբերյալ միասնական թվային շտեմարանի առկայություն: | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ էներգետիկ ենթակառուց-վածքների և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսութ-յան նախարարություն<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն<br><br>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br><br>ՀՀ առողջապահութ-յան նախարար<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br><br>ՀՀ ազգային անվտանգություն | 2022թ.<br>4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծառայություն<br><br>ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե<br><br>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե | | |
| 7. | Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման համակարգի ներդնում | Աջակցել ընդերքօգտագործողներին ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման պլանների մշակման հարցում, ամփոփել և վերլուծել լիազոր մարմին ներկայացվող կառավարման պլանները, ստեղծել կառավարման պլաններով նախատեսված բնապահպանական միջոցառումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազա:<br><br>Ընդերքօգտագործ-ման թափոնների և ընդերքօգտագործ-ման թափոնների օբյեկտների կառավարման վերաբերյալ | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | համապարփակ տեղեկատվական բազայի առկայություն: | | | | |
| 8. | Ընդերքօգտագործող-ների կողմից ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացման արդյունքների տրամադրման համակարգի ներդնում | Մշակել և ներդնել լիազոր մարմնին ընդերքօգտագործողների կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքների տրամադրման կամ էլեկտրոնային կայքերում տեղադրման ընթացակարգերը, ստեղծել տեղեկատվական ամփոփ համակարգ իրականացված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ:<br><br>Շրջակա միջավայրի վրա ընդերքօգտագործման ոլորտի գումարային և հավաքական ազդեցության ճշգրիտ գնահատում: | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2018թ-ից շարունակա-կան | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 9. | Հողային ռեսուրսների որակի և էկոլոգիական ծանրաբեռնվածութ-յան թեմատիկ քարտեզների մշակում | Հողերի տեխնածին աղտոտվածության բնույթը և աստիճանը արտացոլող՝ աշխարհագրական հստակ կապակցում ունեցող թեմատիկ քարտեզների մշակում:<br>Հողերի արդյունավետ և ողջամիտ յուրացման, տնտեսական գործունեության | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2020թ-ից շարունակա-կան | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | բնապահպանական կառավարման հիմքերի ձևավորում: | | | | |
| 10. | Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (ռեկուլտիվացիոն ֆոնդի) արդյունավետ կառավարման համակարգի ներդնում | Դրամագլխում կուտակվող դրամական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում, ընդերքօգտագործող-ների կողմից կատարված հատկացումների արժեզրկման նվազեցում:<br><br>Հողերի վրա ընդրքօգտագործման ոլորտի բացասական ազդեցությունների նվազեցման համար լրացուցիչ եկամուտների ստացում: | ՀՀ բնապահպանության նախարարություն | ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2022թ. 4-րդ եռամսյակ | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 11. | Հողերի տեխնածին աղտոտվածության և դեգրադացման հարցերի վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում | ՀՀ բնապահպանության նախարարության կայքում համապատասխան տեղեկատվական նյութերի, տնտեսվարողների կողմից ներկայացված տվյալների հրապարակում, հետադարձ կապի մեխանիզմի մշակում և գործարկում:<br><br>Հասարակության տարբեր շերտերի իրազեկվածություն հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալներին: | ՀՀ բնապահպանության նախարարություն | | 2019թ-ից շարունակական | ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |